2004, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (168)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ս. Ղեւոնդյանց քահանաների տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Փետրվարի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ շուքով նշվեց Ս. Ղեւոնդյանց քահանաների տոնը: Այս առիթով հայոց հոգեւոր կենտրոն էին ժամանել Հայաստանի եւ Արցախի թեմի շուրջ 100 քահանաներ՝ վերստին նորոգելու իրենց ուխտն Աստծո հետ եւ հայտնելու իրենց հավատարմությունն ու սերը՝ հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Արցախի թեմի հոգեւոր սպասավոր, Գանձասարի վանահայր Տ. Հովհաննես քհն. Հովհաննիսյանը:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ քահանայական հավաք, որի քննարկման նյութն էր եկեղեցու ծառայությունը երիտասարդության շրջանում: Վեհափառ Հայրապետի անունից ներկաներին ողջունեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը՝ ներկայացնելով օրվա խորհուրդն ու ժողովի կանոնակարգը: Հայաստանի եւ Արցախի թեմերի ներկայացուցիչների զեկույցներից հետո հոգեւորականները արտահայտեցին իրենց մտորումները ու մտահոգությունները արծարծված խնդիրների վերաբերյալ:

Հավաքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց հոգեւոր դասին եւ հորդորեց հովվել մեր ժողովրդին Քրիստոսի Ավետարանի լույս պատգամներով՝ առավել ջանասիրությամբ եւ նվիրումով կրելով Քրիստոսի քաղցր լուծը: **«Մեծապես ուրախ ենք, որ Տերն ընձեռում է մեզ այսպիսի պահեր համախմբվելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, մեր ուխտը վերանորոգելու, մեր առաքելության ուղին առավել հստակ դարձնելու, աղոթքով գոտեպնդվելու, աղոթքով զորանալու եւ այս դժվարին ժամանակներում մեր առաքելությունն իրականացնելու համար»**,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ի նշանավորումն Ս. Ղեւոնդյանց տոնի եւ ի գնահատություն իրենց ծառայության՝ Գարեգին Բ Կաթողիկոսի սրբատառ կոնդակով Հայաստանի եւ Արցախի թեմերից 3 քահանաներ արժանացան ավագ քահանայության, 6-ը՝ ծաղկյա փիլոն կրելու պատվի, իսկ 17-ը՝ լանջախաչ կրելու իրավունք ստացան:

Քահանայական հավաքից հետո Մայր Աթոռի միաբաններն ու թեմերից ժամանած քահանաները Մայր տաճարում մասնակցեցին երեկոյան ժամերգությանը:

Քահանայական հավաքին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ եւ թեմակալ առաջնորդներ:

## Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվության նախարարին



Փետրվարի 26-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվության նախարար Ալի Յունեսիին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու հարեւան երկրների պատմական ու մշակութային կապերի, երկու ժողովուրդների բարեկամության մասին:

Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց հայ-իրանական բարեկամական հարաբերությունների տեսանելի առաջընթացը եւ իր երախտագիտությունը հայտնեց Իրանի իշխանություններին այն հոգատար վերաբերմունքի համար, որ տածում են հանդեպ հայ համայնքը: Մասնավորապես նշվեց, որ իրանահայերը, լինելով երկրի լիիրավ քաղաքացիներ, ազատորեն կարողանում են պահպանել նաեւ իրենց ազգային-կրոնական ավանդույթները:

Վեհափառ Հայրապետն ու իրանցի հյուրը ժողովուրդների բարեկամության ամրապնդման կարեւոր ազդակ նկատեցին կրոնների միջեւ երկխոսությունը: Այս առիթով Ալի Յունեսին նշեց, որ Վեհափառ Հայրապետն իր ներկայությամբ կարեւոր ներդրում կարող է ունենալ արդեն մի քանի տարի առաջ Իրանում սկիզբ առած նմանատիպ երկխոսությանը:

Հանդիպման ավարտին Ալի Յունեսին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ նշելով, որ մեծապես տպավորված է հնամենի Սբ. Էջմիածնով: Հյուրերը եղան նաեւ Մայր Աթոռի թանգարանում:

Պատվիրակությանը Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ուղեկցում էին զույգ երկրների դեսպաններն ու Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Կարլոս Պետրոսյանը:

Տես՝ էջ 2

## Ս. Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում եւ քահանայական ձեռնադրություն



Փետրվարի 19-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանի, քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացան 2 սարկավագ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սբ. Պատարագ, որի ընթացքում ձեռնադրող սրբազան հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ եւ ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արմեն սրկ. Դեւեջյանը վերակոչվեց Տ. Կտրիճ քահանա, իսկ Վարդան սրկ. Մովսիսյանը՝ Տ. Շահան քահանա:

**«Ահա այսօր՝ Սրբոց Վարդանանց նվիրական տոնի օրը, մենք ողջ եկեղեցով նշում ենք Ավարայրի ճակատամարտում հոգեւոր եւ բարոյական հաղթանակ տարած ս. Վարդան Մամիկոնյանի եւ նրա հետ նահատակված 1036 զինվորների անմահ հիշատակը: Այսօր մեզ համար այն դառնում է ավելի նվիրական եւ ավելի սուրբ, որովհետեւ այսօր պատմությունն ապրելու եւ այդ պատմության խորհուրդը գիտակցելու օրն է: Այսօր մենք ս. Վարդանի ու 1036 նահատակների աննկուն ոգու կրողներն ենք, մենք էլ ենք այսօր պատրաստ մեր օրվա մարտահրավերներն ընդունելու»**,- նշեց ձեռնադրող սրբազան հայրն իր քարոզում: Վազգեն սրբազանը, շնորհավորելով նորօծ ձեռնադրյալ քահանաներին, մաղթեց, որ իրենց ողջ կյանքում որպես ուղեկից ունենան Ս. Վարդանանց անպարտելի ոգին եւ նրանց աներեր հավատքն առ Աստված:

Ձեռնադրությունից հետո Ավագ Սբ. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, սրբազան հայրերն ու միաբանները եւ համբուրելով քահանաների սրբալույս մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը՝ շնորհավորեցին նրանց:

Վարդանանց տոնին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցում նշվում է նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը: Այս առիթով Սբ. Պատարագի ընթացքում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաների մասնակցությամբ տեղի ունեցավ նաեւ հանդիսություն՝ նվիրված ս. Վարդանանց հերոսամարտին:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, սրբազան հայրը կատարեց նաեւ վեղարի տվչություն: Մխիթարյան հայրերից Տ. Տաճատ ծայրագույն վարդապետ Յարտմյանը, իր հավատարմության ուխտը կատարելով Իջման Ս. Սեղանի առջեւ, սրբազան հոր ձեռքից, որպես կուսակրոն քահանա, ստացավ վեղար եւ ընդգրկվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերում:

Այսուհետեւ Տ. Կտրիճ քհն. Դեւեջյանը եւ Տ. Շահան քհն. Մովսիսյանն իրենց ծառայությունը կբերեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, իսկ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարտմյանը՝ ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմում՝ Տ. Հովնան արք. Տերտերյանի առաջնորդության ներքո:

*Ամերիկայի Արեւելեան Թեմ*

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՌԻՉՄԸՆՏԻ ՄԷՋ

Ռիչմընտի (Վիրճինիա) Ս. Յակոբ եկեղեցւոյ ծուխը պատմական ու խանդավառ օրեր ապրեցաւ տարւոյս Փետրուար 21 եւ 22 օրերուն:

Առաջին անգամն ըլլալով յիշեալ ծուխի հաւատացեալները իրենց եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուեցան քահանայական ձեռնադրութեան:

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան քահանայ ձեռնադրեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Բրշ. Տիգրան Սրկ. Կարապետեանը, որ եղաւ Առաջնորդ Սրբազան Հօր 15-րդ ձեռնասունը:

Ձեռնադրիչ Սրբազան Հայրը նորընծայ քահանան վերակոչեց Տէր ՅՈՎՍԷՓ:

Աւելի քան 160 հոգի ներկայ գտնուեցան եկեղեցական արարողութեան եւ ճաշկերոյթին. թիւ մը որ այս համեստ ծուխին համար բացառիկ երեւոյթ մը կը ներկայացնէ: Ներկայ էին նաեւ նորընծային ծնողները՝ Հայաստանէն:

Տ. ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ծնած է Հայաստան 1972 թուականին: Յաճախած է Գէորգեան ճեմարանը, ուրկէ շրջանաւարտ ըլլալէ ետք՝ 1991 թուականին մեկնած է Երուսաղէմ եւ մինչեւ 1996 թուականը հետեւած է Դպրեվանքի դասընթացքներուն: 1992 թուականին սարկաւագ ձեռնադրուած է Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի ձեռամբ: 1997 թուականին եկած է Միացեալ Նահանգներ եւ իր ուսումը շարունակած է Ս. Ներսէս Ընծայարանի եւ Ս. Վլատիմիր Դպրեվանքին մէջ: 2000 թ. եղած է հոգեւոր մատակարարը Ռիչմընտի Ս. Յակոբ եկեղեցւոյ:

Նորընծայ Տէր Յովսէփ իր քառասունքի շրջանը պիտի անցընէ Ս. Ներսէս Ընծայարանին մէջ, եւ անդրանիկ Ս. Պատարագը պիտի մատուցանէ Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ Ծաղկազարդի Կիրակին՝ Ապրիլ 4-ին:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ՏՐԴԱՏ Ա ՕԹՄՍԵՑԻ
## (741-764)

Դավիթ Ա Արամոնեցի կաթողիկոսի հայրապետական աթոռին հաջորդեց Տրդատ Ա Օթմսեցին, որը ծնունդով Այրարատ աշխարհի Վանանդ գավառի Օթմուս գյուղից էր: Ղևոնդի տեղեկությամբ՝ սերում է նախարարական ընտանիքից, ուստի հաշվի առնելով Օթմուսի աշխարհագրական դիրքը՝ կարելի է ենթադրել, որ ծագում էր Վանանդացիների իշխանական տոհմից: Պատմությունը, ցավոք, նրա մասին առանձին հիշատակներ չի պահպանել, ուստի պետք է ենթադրել, որ նա, հավանաբար, եղել է Վանանդի եպիսկոպոսը: Հովհաննես Դրասխանակերտցին նրան բնութագրում է որպես սուրբ և պարկեշտ, առաքինությամբ փայլող անձնավորություն, որի աղոթքներն անգամ վերացրին երկրում տեղ գտած ասպատակությունները: Բացառությամբ մեկի՝ մյուս բոլոր ցուցակները նրան վերագրում են 23 տարվա աթոռակալություն, որով նրա գործունեությունն ընկնում է 741-764 թթ.: Հայրապետության սկիզբը, համաձայն Ասողիկի, հայոց 190 թվականն է և լիովին համապատասխանում է Դավիթ Արամոնեցու մահվան տարուն:

Չնայած Դրասխանակերտցու տված գնահատականներին՝ պատմիչները, ըստ էության, ուշադրությունից դուրս են թողել նրա գործունեությունը՝ ստիպելով մտածել, որ այն մեծագործություններով աչքի չի ընկել: Սակայն հիշյալ ժամանակները նշանավոր էին մի շարք անցքերով, որոնց վրա էլ հրավիրում ենք ընթերցողի ուշադրությունը: Տրդատ Ա կաթողիկոսի աթոռակալության հենց առաջին տարիներին՝ Հեշամ խալիֆի մահից հետո, սկսվեցին Օմայան խալիֆայության թուլացումը և քայքայումը: Իսկական մահմեդականի համար Օմայանները բռնակալներ էին, որոնք պետական իշխանությունը կամ մեծ իմամությունը խլել էին Մուհամեդի դուստր Ֆաթիմայի և նրա ամուսին Ալիի ընտանիքի ձեռքից: Երկու գերդաստաններ, որոնցից մեկի հիմքը դրել էր Ալիի տան՝ կոտորածից փրկված Մուհամեդ որդին, իսկ մյուսինը՝ Մարգարեի հորեղբայր Աբբասը, հավակնում էին խալիֆայական իշխանության: Երկու գերդաստանների միջև մի տեսակ միաձուլում տեղի ունեցավ, երբ Ալիի թոռ Աբդուլլահ-իբն Մուհամեդն իր առաջնության իրավունքը զիջեց Աբբասի ծոռ Մուհամեդին, որը դրա համար Հեշամ խալիֆի կողմից ենթարկվեց հալածանքների, ձերբակալվեց և բանտից դուրս գալուց շատ չանցած՝ մահացավ 746 թվին: Նա այդ իրավունքը թողեց իր որդի Իբրահիմին, որն այդպես էլ օրենքով այն ձեռք չբերեց և սպանվեց: Այնուամենայնիվ Մուհամեդի մյուս որդին՝ Աբդուլ-Աբբասը, այդ իրավունքին տիրացավ՝ հիմք դնելով Աբբասյան հարստության իշխանությանը Արաբական խալիֆայությունում՝ ստանալով ժամանակակիցների կողմից Սաֆֆահ կամ Արյունռուշտ մականունը: Օմայանների հարստության օրավուր աճող թուլությանն էապես նպաստում էր Հեշամի հաջորդ՝ Վալիդ Բ-ի զեխ ու անառակաբարո կենցաղը՝ դարձնելով նրան հավատացյալների աչքում անընդունելի ու զզվելի անձնավորություն:

Մեկ տարի չանցած՝ նա սպանվեց, իսկ խալիֆայությունը հայտնվեց քաղաքացիական պատերազմի ու քաոսի մեջ: Գահին հավակնում էին Եզիդ Վալիդի, Եզիդ Սուլեյմանի, Սուլեյման Հեշամի որդիները և Իբրահիմ Վալիդի մյուս որդին: Այս դաժան պայքարի ընթացքում հայտնվեց գահի մեկ հավակնորդ ևս՝ Մրվան-իբն-Մուհամեդը, որը Մրվան Ա խալիֆի թոռն էր: Վերջինս եղել էր Արմինիայի ոստիկան, իսկ այնուհետև կառավարել էր Միջագետքում և այժմ օգտվելով պատեհ հնարավորությունից՝ 744 թվին տիրեց խալիֆայական իշխանությանը: Նա գահակալեց 6 տարի: Մինչ նա պայքարում էր այլևայլ ապստամբությունների դեմ, ուժեղացան Աբբասյանները, իսկ Մրվան-իբն-Մուհամեդը սպանվեց ղպտիների եկեղեցում՝ Եգիպտոսի Բուշիր գյուղում: Խալիֆայության մեջ նոր հարստության հաստատումով շատ բան չփոխվեց, եթե չհաշվենք մայրաքաղաքի տեղափոխությունը Դամասկոսից Բաղդադ, սակայն քիչ թե շատ նորմալացած հայ-արաբական հարաբերությունները նշանակալից չափով խաթարվեցին:

Մրվանից հետո Արմինիայի ոստիկանի պաշտոնն անցել էր Իսահակ-իբն-Մսլիմին, երբ արդեն նրա պաշտոնավարության շրջանում Վալիդ խալիֆի կողմից Եմանի անապատ աքսորված Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները, օգտվելով Վալիդի սպանությունից, վերադարձան Հայաստան և ոտքի հանեցին Վասպուրական աշխարհը: Դավիթ Մամիկոնյանը դավադրություն կազմակերպեց Հայոց պատրիկ Աշոտ Բագրատունու դեմ, սակայն այն ձախողվեց, և վերջինս, յուրայիններին հավաքելով Դարևնից բերդում և այն ամրացնելով, գնաց Արաբիա՝ Մրվանի մոտ՝ ակնկալելով, ի սեր հին բարեկամության, նրա պաշտպանությունը: Իսահակ ոստիկանը պատրիկությունը հանձնեց Գրիգոր Մամիկոնյանին, սակայն Մրվան խալիֆը կարգադրեց պաշտոնում վերականգնել Աշոտ Բագրատունուն, իսկ Դավիթ Մամիկոնյանին, ծայրակոտոր անելով ոտքերն ու ձեռքերը, ցից հանելով սպանել: Դավիթ Մամիկոնյանի մահապատիժն ու պատրիկության պաշտոնի վերահանձնումը Աշոտ Բագրատունուն էլ ավելի ուժեղացրին Գրիգոր Մամիկոնյանի ատելությունը վերջինիս նկատմամբ: Աշոտ Բագրատունու նկատմամբ արտաքնապես պահպանելով խաղաղ հարաբերություններ՝ նա նախարարներին խորհուրդ էր տալիս թոթափել արաբական լուծը, որը լայն արձագանք գտավ իշխանների մեծ մասի շրջանում, քանի որ արաբական լուծը, իրոք, անտանելի էր դարձել:



Հասնելով նախարարների մեծ մասի միաբանությանը՝ Գրիգոր Մամիկոնյանի համախոհները Աշոտ Բագրատունուն տեղյակ պահեցին իրենց ծրագրերի մասին՝ հորդորելով նրան միանալ իրենց: Չնայած Աշոտ Բագրատունու՝ իշխաններին ապստամբությունից ետ պահելու բոլոր ջանքերին՝ ի վերջո նա հարկադրված էր միանալ ապստամբներին, իսկ Աշոտը և Գրիգորը միմյանց հետ դաշինք կնքեցին: Ապստամբները դրանից հետո շարժվեցին Տայքի ամուր աշխարհը, ամրացրին այն և ապավինեցին Պոնտոսի բյուզանդական բանակի պաշտպանությանը: Այս դեպքերը տեղի ունեցան 747 կամ որ ավելի հավանական է՝ 748 թվին: Սակայն նախարարների միասնությունը գրեթե մեկ տարի էլ չտևեց: Նրանց մի մասը հակվեց դեպի Աշոտ Բագրատունին և Հայոց պատրիկի հետ հեռացավ Բագրևանդ գավառ՝ փորձելով արաբների հետ հաշտության եզրեր գտնել: Չի բացառվում, որ Աշոտ Բագրատունու միանալն էլ ապստամբներին ավելի շատ եղել էր առերես, և նա այդ ամբողջ ընթացքում պահպանել էր իր կապերն արաբների հետ: Լուր ստանալով Հայոց պատրիկի և նրա համախոհների հեռանալու մասին՝ Գրիգոր Մամիկոնյանը հետապնդեց նրան և ձերբակալելով հանձնեց իր եղբոր՝ Դավթի սպասավորների դատին, որոնք նրան կուրացրին: Իսկ ինքը՝ որպես Հայոց իշխան, մեկնեց Կարին քաղաք, որպես հաղթանակող՝ հայտարարեց, որ ընդունում է բյուզանդական կայսր Կոստանդին Կոպրոնիմոսի գերիշխանությունը: Սակայն դեպքերն այլ զարգացում ստացան, քանի որ շուտով Գրիգոր Մամիկոնյանը ծանր հիվանդացավ ու մահացավ, իսկ նրա փոխարեն Հայոց իշխան հռչակված նրա կրտսեր եղբայր Մուշեղ Մամիկոնյանը կարճ ժամանակով վայելեց այդ պաշտոնը:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՇԵՆՈՒԴԱ Գ

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սկիզբը՝ 2003-ի թիվ 19-24, 2004-ի թիվ 1-3*

### Ժ. ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1) Ասվում է, թե սրբերի բարեխոսությունը խնդրելիս մենք աղոթում ենք նրանց: Պատասխանում ենք, որ չենք աղոթում սրբերին, մենք միայն խնդրում ենք նրանց աղոթքներն ու օգնությունը մեզ համար: Մեր զրույցը Կույս Մարիամի հետ նրան ուղղված աղոթք չէ, այլ զավակների որդիական զրույցն իրենց մոր հետ, մեր սրտի գաղտնիքների մի տեսակ վստահում նրան և ոչ թե նրան ուղղված աղոթք: Մենք քաղցրությամբ խնդրում ենք նրա բարեխոսությունը մեզ համար, քանի որ նա Թագավորի աջ կողմում նստող Թագուհին է:

2) Ասվում է, թե բարեխոսությունը միջնորդության մի տեսակ է: Պատասխանում ենք. իսկ ի՞նչ վատ բան կա դրանում: Աստված Ինքն ընդունեց միջնորդությունը և պատվիրեց այն: Նա Աբիմելեքին պատվիրեց, որ Աբրահամն աղոթի նրա համար, որպեսզի նա ապրի (Ծննդ. Ի 7): Աստված պահանջեց Հոբի բարեկամներից, որ Հոբն աղոթի նրանց համար, որպեսզի չլինի թե Ինքը նրանց հետ վարվի նրանց թույլ տված անմտությունների համաձայն (Հոբ ԽԲ 8): Նա թույլ տվեց, որ Աբրահամն աղաչի Սոդոմի համար (Ծննդ. ԺԸ), և Մովսեսն էլ՝ Իսրայելի ժողովրդի: Նա լսեց նրանց և նրանց խնդրանքներն ընդունեց:

### ԺԱ. ՍՐԲԵՐԻ ԱՂՈԹՔՆԵՐԸ ԽՆԴՐԵԼՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՂՄԸ

1) Սրբերի բարեխոսությունը խնդրելը ենթադրում է գալիք կյանքի հանդեպ հավատ. հավատ, որ աշխարհից հեռացածները շարունակում են ապրել և ունեն իրենց կատարելիք գործը. հավատ երկնքի ու երկրի միջև մշտական հարաբերության հանդեպ և հավատ սրբերի մեծարման հանդեպ, ովքեր մեծարվում են հենց Աստծո կողմից:

2) Բարեխոսությունը սիրո մտերմություն է Մեկ Մարմնի անդամների միջև: Եկեղեցին մարմինն է, Քրիստոսը՝ գլուխը, իսկ մենք ամենքս՝ երկրում թե երկնքում՝ այդ Մեկ Մարմնի անդամները: Սերը, աղոթքներն ու մտերմությունը փոխանակվում են Մեկ և միևնույն Մարմնի անդամների միջև: Մենք մեր աղոթքներում խնդրում ենք ննջեցյալների համար, նրանք էլ իրենց աղոթքներով բարեխոսում են մեզ համար: Սա անքակտելի մի հարաբերություն է:

Ինչո՞ւ են կամենում բարեխոսությունը մերժող մարդիկ վերացնել այս մտերմությունը. ոչ մեր կողմից աղոթքներ ննջեցյալների համար և ոչ աղոթքներ կամ բարեխոսություն ննջեցյալների կողմից մեզ համար: Արդյո՞ք Հայր Աստծո և յուրաքանչյուր հավատացյալի միջև սիրո հարաբերությունը խափանում է Աստծո զավակների միջև սիրո հարաբերության գոյությունը: Արդյոք Տեր Հիսուս Քրիստոսը չխնդրե՞ց Հորը. «...որպեսզի ամենքը մեկ լինեն, ինչպես որ Դու ես, Հայր, Իմ մեջ, և ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ Մեր մեջ լինեն... որպեսզի մեկ լինեն, ինչպես և Մենք ենք մեկ. ես՝ նրանց մեջ, և Դու՝ Իմ մեջ, որպեսզի կատարյալ լինեն միության մեջ» (Հովհ. ԺԷ 21-23):

3) Բարեխոսությունը շահեկան է: Ով մերժում է այն, կորցնում է դրա օգուտներն ու փոխարենը ոչինչ չի շահում: Իսկ ովքեր հավատում են բարեխոսությանը, օգուտ են ստանում իրենց և սրբերի միջև սիրո հարաբերությունից: Նրանք օգուտ են ստանում աշխարհից հեռացածների հոգիների հետ հենց միայն հարաբերվելուց: Նրանք իրենց աղոթքներին ավելացնում են մյուս աշխարհում բնակվողների առավել խոր և զորավոր աղոթքները՝ առանց իրենց կողմից որևէ կորստի:

Այնուամենայնիվ, բարեխոսությունը մերժողները կորցնում են այս հարաբերությունն ու այս աղոթքները՝ փոխարենը ոչինչ չշահելով: Նրանք կորցնում են պարզ հավատը նրանց, ովքեր նշում են սրբերի տոները, այցելում նրանց եկեղեցիները և խնդրում նրանց աղոթքները: Ուրեմն ինչպե՞ս պիտի համարձակվեն հանդիպել սրբերին մյուս աշխարհում՝ այն բանից հետո, որ մերժեցին մեծարել նրանց կամ խնդրել նրանց աղոթքներն ու բարեխոսությունը:

4) Բարեխոսությունն առաջ է բերում սրտի հեզություն: Բարեխոսություն խնդրող անձը խոնարհ է. նա չի հպարտանում Աստծո հետ ունեցած իր անձնական հարաբերությամբ, այլ իրեն ցույց է տալիս իբրև մեղավոր ու տկար մարդ, ով խնդրում է իր համար ուրիշների բարեխոսությունը: Իսկ բարեխոսությունը մերժող անձը սրա հակառակն է: Նա կարող է բարձրամտաբար ասել. «Ի՞նչ տարբերություն իմ և այդ սրբերի միջև: Իմ և Աստծո միջև հարաբերությունն այնքան զորավոր է, որ բարեխոսության կարիքը չունի»: Նա իրեն դասում է սրբերի, նահատակների ու հրեշտակների կարգում:

Այսպիսի մարդիկ կհանդիմանվեն առաքյալի հետևյալ խոսքերով. «Աղոթեք մեզ համար» (Եբր. ԺԳ 18), և՝ «Ամենայն աղոթքներով և աղաչանքներով ամեն ժամ աղոթե՛ք Հոգով. և դրանում հսկե՛ք անխոնջ հարատևությամբ և աղաչանքներով բոլոր սրբերի համար» (Եփես. Զ 18):

5) Բարեխոսությունն Աստծո արդարության ապացույց է հավասարության սկզբունքի հարցում: Եթե Աստված թույլ է տալիս սատանային պայքարել Իր զավակների հետ, նրանց փորձել կեղծ տեսիլքներով ու երազներով և չարչարել նրանց, ապա, համաձայն Նրա արդարության՝ և հավասարության սկզբունքի, Նա թույլ է տալիս հրեշտակներին ու արդարների հոգիներին օգնել երկրի վրա գտնվող Իր զավակներին: Այսպիսով մյուս աշխարհում բնակվողների հոգիների միջնորդության շնորհիվ Աստծո արդարությունն է երևում մարդու կյանքում:



Եթե Աստված սատանային թույլ տվեց վնասելու Հոբին, թույլ է տալիս նաև, որ հրեշտակները փաթաթեն մարդկանց վերքերն ու սպասավորեն Իր զավակներին առանց նույնիսկ նրանց խնդրանքի: Սակայն որքա՜ն առավել թույլ կտա սա, եթե նրանք աղոթեն սրա համար: «Մի՞թե նրանք ամենքը հարկավոր հոգիներ չեն, որ ուղարկվում են սպասավորելու նրանց, ովքեր ժառանգելու են փրկությունը» (Եբր. Ա 14):

Հետևաբար, քանի որ հրեշտակներն ուղարկվում են այս նպատակով, ինչո՞ւ չխնդրենք նրանց միջնորդությունը՝ օգնելու մեզ, երբ մեզ մոտ են:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՏՐԴԱՏ Ա ՕԹՄՍԵՑԻ (741-764)



*Սկիզբը՝ էջ 3*

Թե ինչ դիրք գրավեց այս իրադարձությունների ժամանակ Հայոց հայրապետը, հայտնի չէ: Աղբյուրները լռում են՝ կարծես թե հավաստելով նրա անգործունյա ընթացքը:

Քանի դեռ Արաբական խալիֆայությունում պայքար էր գնում գահի համար, բյուզանդացիները հեշտ հաղթանակներ էին տանում, իսկ հայերն իրենց կարող էին ազատ զգալ արաբական տիրապետությունից: Սակայն Աբբասյանների իշխանության հաստատումից հետո արքունիքը լուրջ ուշադրություն դարձրեց ապստամբած ծայրամասերին եւ սկսեց ապստամբությունները դաժանորեն ճնշել: Հայաստան արշավեց խալիֆի եղբայր Աբու-Ջաֆեր-էլ-Մանսուրին, որը Գրիգոր Մամիկոնյանի բարձրացրած ապստամբությունն արյան մեջ խեղդեց՝ երկիրը ենթարկելով ահավոր հարկապահանջության: Սկսեցին հավաքել հնից մնացած հարկերը, անգամ՝ մահացածների համար, ապահարկությունից զրկվեց եկեղեցին, իսկ հարկը վճարածների պարանոցին խարան էին դնում կապարյա կնիքով: Անգամ նախարարական տներն աղքատացան՝ ամեն ինչ զոհաբերելով Աբու-Ջաֆերի բռնություններից ազատվելուն: Ահավոր արծաթասեր այս անձը, որի համար հարստությունն Աստծուց բարձր էր, 754 թվին՝ իր եղբայր Աբուլ-Աբբասի մահից հետո, տիրեց խալիֆայական իշխանությանը:

Աբու-Ջաֆերը Հայաստանում գտնված օրերին ոստիկան էր կարգել Ուսագի որդի Եզիդին, որն էլ պատրիկի պաշտոնը հանձնեց Բագարատ Բագրատունու որդի Սահակին, որը կուրացված Աշոտ Բագրատունու եղբոր տղան էր: Աշոտ Բագրատունին, որ այլեւս ի վիճակի չէր ակտիվ քաղաքական գործունեություն վարելու, կուրացվելուց 13 տարի անց՝ 761 թվին, մահացավ եւ, անկասկած, թաղվեց Բագրատունիների տոհմական հանգստարանում: Ինչ վերաբերում է Սահակ Բագրատունուն, ապա Ղեւոնդ պատմիչի խոսքերով՝ նա գեղեցկադեմ էր, երեւելի հասակով, ազնվական բարքով եւ աստվածերկյուղ, որն ակամա էր վարում իր պաշտոնը՝ չուզենալով աջակից լինել Եզիդին, բայց եւ միաժամանակ ստիպված էր առաջնորդել Հայոց զորքը: Խալիֆայությունն այլեւս հայոց այրուձիու համար չէր վճարում, եւ նախարարներին արգելված էին իրենց զորագնդերը զինել սեփական միջոցներով:

Լավ չէր հայերի կացությունը նաեւ բյուզանդական կայսրությունում: Կոպրոնիմոս կայսրը, ճնշելով Փոքր Ասիայում իրեն կայսր հռչակած իր քեռայր հայկազն Արտավազդի ապստամբությունը, սկսեց խստություններ կիրառել հայերի նկատմամբ, իսկ շատ չանցած՝ արշավանք ձեռնարկեց դեպի Հայաստան: Նա գրավեց, ավերեց քաղաքը, մեծ թվով գերիներ վերցրեց, որոնց միացան արաբական լծից ազատվել ցանկացող շատ հայեր: Կայսեր արշավանքը սպասված հաջողությունը չբերեց, ավելին՝ արաբները, անցնելով հակահարձակման, գրավեցին Մելիտինեն, մտան Կիլիկիա եւ Պամփյուլիայի Մելաս վայրում հաղթանակ տարան բյուզանդացիների դեմ: Իր հերթին Եզիդը գրավեց Կարինը, վերականգնեց քաղաքի ամրությունները եւ այնտեղ արաբ գաղթականներ հաստատեց: Այս դեպքերը, Մ. Օրմանյանի ենթադրությամբ, տեղ գտան 756-758 թթ.: Հայերի վիճակը դարձավ մի տեսակ անտանելի: Բռնություններ գործվում էին ամենուրեք՝ բոլոր մակարդակներով: Սուլեյման Պարսիկ անունով մեկն ասպատակում էր Վասպուրականը, եւ տեղի իշխանները ստիպված եղան զենքի դիմել: Ժողովրդական պայքարի գլուխ անցան Վահան Արծրունի իշխանի որդիներ Սահակն ու Համազասպը: Քաջաբար պայքարից հետո երկուսն էլ ընկան կռվի դաշտում: Նրանց եղբայր Գագիկ Արծրունին Սուլեյմանի զորքը դուրս քշեց երկրամասից, իսկ Սուլեյմանը սպանվեց: Արաբները Վասպուրական ուղարկեցին Սալիհ անունով մի զորավարի, որի զորքերի ճնշման տակ Արծրունյաց իշխանը ստիպված եղավ ամրանալ Նկան բերդում: Հարմար պահը որսալով՝ նա կարողացավ ետ մղել նաեւ այս հարձակումը: Սակայն արշավանքները հաջորդում էին մեկը մյուսին, իսկ ապստամբների ուժերը հատվում էին: Ռուհ զորավարի հարձակումը Գագիկ Արծրունուն ստիպեց կրկին ապավինել Նկան ամրոցի ամուր պարիսպներին եւ շարունակել հաջող պայքարը: Ռուհին փոխարինած Մուսե զորավարը, կռվի դաշտում հաջողության չհասնելով, կարողացավ խաբել Գագիկ իշխանին, գերել նրան ու նրա երկու որդիներին՝ Համազասպին եւ Սահակին, որոնք կապանքներով ուղարկվեցին խալիֆին: Գագիկը վճարեց պահանջված գումարը, սակայն ազատություն չստացավ, իսկ նրա զավակները կարողացան հայրենիք վերադառնալ:

Այսրկովկասյան երկրների համար զարհուրելի հետեւանքներ ունեցավ խազարների արշավանքը: Եզիդ ոստիկանն ամուսնացել էր խազարական խաքանի Խաթուն անունով քրոջ հետ եւ ստացել մեծ օժիտ: Սակայն շուտով Խաթունը մահացավ, իսկ խազարները, դրա մեջ դավ տեսնելով, Ռաժդարխան զորավարի գլխավորությամբ արշավեցին Հայք, Վիրք եւ Աղվանք: Եզիդը չկարողացավ կազմակերպել երկրի պաշտպանությունը, եւ խազարներն ավարեցին, գերփեցին եւ գերեցին երկիրը եւ մեծ ավարով ու գերիներով ետ դարձան: Խազարները դրանով բավարարվեցին ու հեռացան, սակայն Եզիդի ագահությունից ծնունդ առնող հալածանքները չդադարեցին: Մարդկանցից փող կորզելու նպատակով նրանց տանջում էին կտտանքներով. գելարանով, կախաղան էին բարձրացնում, ենթարկում դառը տանջանքների: Շատերը դրանից ազատվելու համար փախչում էին քարանձավներն ու փապար վայրերը, հաճախ ձյունահեղձ ու գետավեժ էին լինում, միայն թե փրկվեին Եզիդի հարկահաններից ու հարստահարություններից: Սահակ պատրիկի եւ Տրդատ կաթողիկոսի ջանքերը՝ ետ պահել Եզիդին նման քայլերից, արդյունք չտվեցին, ուստի նրանք դիմեցին Աբու-Ջաֆեր խալիֆին, որը եւ նրան ետ կանչեց: Եզիդին հաջորդեցին Բաքարը կամ Բաքրը, իսկ մեկ տարի անց՝ Կահաթրայի որդի Հասանը, որն իր վարքով չէր զիջում Եզիդին:

Այս խառնակ ու անհանգիստ ժամանակներում էլ Տրդատ Ա Օթմսեցին մահացավ 764 թվին եւ թերեւս թաղվեց, ինչպես հավանական ենթադրում է Մ. Օրմանյանը, իր հայրենի գյուղում:

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***



# ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԾ ԴԻՄՈՒՄ-ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ



*Սկիզբը՝ թիվ 3*

Գեւորգ Զ Չորեքչյանը, 1945 թ. նոյեմբերի 29-ին ողջունելով Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման քսանհինգերորդ տարեդարձը, ՀԽՍՀ ղեկավարությանը հղված շնորհավորական ուղերձում գրում է. **«Խորագոյն կերպով հաւատացած ենք նաեւ, որ ՍՍՌ Միութեան կառավարութեան եւ մեծ Ստալինի ջանքերով Հայ ժողովուրդը իրականացած կտեսնի իր Հայրենիքի ամբողջացումը եւ իր ժողովրդի համախմբումը Մայր Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում»** (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 10, թ. 1):

Դիվանագետ Կաթողիկոսը 1946 թ. դեկտեմբերին կրկնել է իր վերոհիշյալ պահանջը՝ **«արտասահմանյան հայերի հայրենադարձության վերաբերյալ ԽՍՀՄ կառավարության որոշման կապակցությամբ»** («Հայկական Հարց» հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 99):

Հայրենասեր եւ մեծագործ Հայրապետը 1947 թ. ապրիլի 20-ին հրապարակել է ընդարձակ մի կոնդակ՝ հայ ժողովրդի արդար դատի եւ բռնադատված իրավունքների մասին: **«Հայ ժողովրդի դատը հին դատ է,- գրված է կոնդակում,- նախասովետական դատ: Հայ ժողովուրդը իր բոլոր հատուածներով՝ ինքն է հարուցել ու նախաձեռնել դատը իր նոր փուլում եւս, ինչպէս եւ ողջ անցեալում: Հարազատ սովետական հայ կառավարութիւնը եւ մենք՝ որպէս պատմական աւանդապահն ազգային իրաւանց եւ գերագոյն Պատրիարք-Կաթողիկոս Մայր Աթոռոյ Սուրբ Էջմիածնի՝ մեր սրբազնագոյն պարտքն ենք համարում արձագանքել բովանդակ հայ ժողովրդի արդար պահանջին եւ պաշտպան կանգնել հարիւր հազարների անմեղ արեամբ ու հերոսական մահով սրբագործուած մեր նուիրական Դատին: Մեր Դատը իրաւունքի եւ արդարութեան դատն է: Հայ ազգի եւ Հայրենիքի դատ է, դա քաղաքական խղճի, պարտքի ու բարոյականութեան խնդիր է: Եւ այդ Դատի յաղթանակը խնդրում եւ ակնկալում ենք աշխարհիս զօրեղներից, դեմոկրատական հզօր պետութիւններից, յուսալով, որ այս անգամ, հնադարեան քաղաքակիրթ ու հերոսական հայ ժողովրդի արդար ձայնը գէթ այս անգամին լսելի կդառնայ Միաւորեալ Ազգերի Մեծ ատեանում, եւ հայ բազմաչարչար ժողովուրդը այս անգամ գոնէ զոհ չի դառնայ մեծ պետութիւնների ընթացիկ ու ընչաւէր հակամարտութիւնների»** (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 157, թ. 6):

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանի՝ 1947 թ. ապրիլի 14-ին գրված եւ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանին ուղղված գրությունից տեղեկանում ենք, որ նույն թվականին **«Գեորգ Զ Կաթողիկոսը խնդրում է Անգլիական եկեղեցու առաջնորդին, որպես անգլիական պարլամենտի անդամ ձայն բարձրացնել ի պաշտպանություն հայերի արդարացի պահանջի՝ հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միավորելու, որի մասին նա խոսել էր երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիա եւ ԱՄՆ, ղեկավարներին հասցեագրված իր ուղերձում»** (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 19, թ. 9):

Անգլիական եկեղեցու առաջնորդին նույն բովանդակությամբ հուշագրով դիմել է նաեւ Եվրոպայի թեմի առաջնորդ Արտավազդ արք. Սյուրմեյանը (1889, Ակն - 1951, Փարիզ): Այդ կապակցությամբ Գեւորգ Զ Կաթողիկոսը գրել է. **«Արտաւազդ արքեպիսկոպոսը, այցելութեան ժամանակ, իր իրաւանց սահմանից ելնելով՝ թոյլ է տուել իրեն գրաւոր յուշագրով դիմել Քէնթրբերիի արքեպիսկոպոսին եւ խնդրել, որ նա՝ Հայկական դատի առթիւ՝ «պատշած դիմումներ կատարէ իրաւասու նախարարների մօտ»: Նորա այս քայլը իր իրաւանց սահմաններից վեր է եւ բնականաբար կարժանանայ նկատողութեան: Այս առթիւ մտադիր ենք նաեւ ընդհանուր շրջաբերականով զգուշացնել բոլոր թեմակալներին՝ օտար եկեղեցիների Պետերին այցելելիս զգոյշ լինել եւ չելնել իրենց իրաւանց սահմաններից»** (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 823, ց. 1, գ. 26, թ. 22): Բարդ ու դժվարին ժամանակներ էին եւ ԽՍՀՄ ղեկավարության հետ չհամաձայնեցված ցանկացած քայլ կարող էր ճակատագրական լինել:

Մեզ հասած արխիվային եզակի վավերագրերը գալիս են ապացուցելու, որ Գեւորգ Զ Կաթողիկոսն իր դիվանագիտական քայլերը համաձայնեցնում էր անձամբ Ի. Վ. Ստալինի հետ: Այսպես, պահպանվել է նրա՝ 1949 թ. գրված եւ Ի. Վ. Ստալինին ուղղված հույժ գաղտնի նամակը, որտեղ Կաթողիկոսը գրում է իր ծրագրերի մասին: Նամակում մասնավորապես ասվում է. **«Սկսել ենք նյութեր հավաքել ու շուտով նաեւ կազմել հատուկ հուշագիր ՄԱԿ Գլխավոր համաժողովի Փարիզյան նստաշրջանին ներկայացնելու համար: Հուշագիրը կկազմվի ռուսերեն եւ հայերեն, կթարգմանվի ֆրանսերեն եւ անգլերեն եւ կտպագրվի Փարիզում նստաշրջանի նախօրեին, կառաքվի ոչ միայն Համաժողովի մասնակիցներին, այլեւ պարբերական մամուլին, հասարակական կազմակերպությունների, քաղաքական գործիչների, գրողների, եկեղեցիներ եւ այլն: Հուշագիրը ծառայելու է տաճկահայ վիլայեթները Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու հայ ժողովրդի պահանջի պատմա-քաղաքական եւ միջազգային իրավական հիմնավորմանը: Ես մասնագետին առաջարկել եմ շատ պատրաստել գիտաքաղաքական հետազոտություն «Armenia irredenta-ն եւ միջազգային իրավունքը» թեմայով:**

*Շարունակությունը՝ էջ 5*



*Տոնական գլոբալիզացիա*

# Քեֆ անողին քեֆ չի պակսիլ

*Սկիզբը` էջ 7*

## Վալենտինի տոնն ու նրա բիզնես-երկրպագուները

Որ հուշանվերն ամենագնվող ապրանքն է` մանավանդ տոն օրերին, կարող է հավաստել յուրաքանչյուր առեւտրական ու վաճառող: Վալենտինյան օրը շատերի համար այնքան շահութաբեր է, որ կարող են հանուն դրա սեփականացնել եւ այլածինը, միայն թե վաճառվեն քաղցրավենիքի հազարավոր տուփեր, կարմիր վարդեր ու ձեռագործ սրտիկներ: Ա՜յ քեզ շահաբեր տոն: Ա՜յ քեզ նորամուծություն, ա՜յ քեզ վաճառականի բերկրանք եւ գնորդի ժամանակավոր հրճվանք...

Հույն Ուղղափառ եկեղեցին գտնում է, որ Վալենտինի տոնը պատմական ու կրոնական կասկածելի ծագում ունի եւ բացասաբար է վերաբերվում Վալենտինի օրվա տոնակատարություններին: եկեղեցին փորձում է փոխարինող տոն ունենալ արեւմտյան այդ երեւույթի նկատմամբ: Ըստ այդ եկեղեցու սպասավոր Գեորգիոս Մետալլինոսի` Վալենտինի տոնակատարությունները մեր ժամանակներում հատուկ խրախուսվում են «մարդկային զգացմունքների կոմերցիալիզացման» նպատակով:

Իսկ Վրաց Ուղղափառ եկեղեցին Վալենտինի օրը չի համարում քրիստոնեական տոն: Վրաց պատրիարքությունն այս տարի պաշտոնական մի հայտարարություն հրապարակեց, ըստ որի` այդ տոնը խորթ է Ուղղափառ եկեղեցուն. այն համարվում է եվրոպական ժողովուրդների տոն: Հայտարարության մեջ ասվում է, որ Վալենտինի օրը չի նշում եւ Կաթոլիկ եկեղեցին: Այս մասին փաստել են Վրաստանում Վատիկանի դեսպանատանը: Պատրիարքությունը հայտարարում է, որ փետրվարի 14-ին նշվող Սիրո օրը սխալմամբ է կապվում սուրբ Վալենտինի անվան հետ:

Մեր իսկ համեստ կարծիքով նույն ինքը` Valentin day-ը, նման է հելլոուինին, խաբելու կամ մազ քաշելու օրվան, որից հուզվում են զգացմունքային մարդիկ, շահում` գործունյաները, մեկ էլ այն մարդիկ, ովքեր կառուցում են մեկ միասնական գլոբալ հասարակություն` իր նոր հայացքներով, սովորություններով ու համամարդկային մշակույթ ասված գլոբալիզացիոն նորամուծություններով:

*Սուսաննա ՄԱՐԳԱՐՅԱՆ*

Հ. Գ. *Այս տարի Վալենտինի օրն ամեն տեղ յուրովի անցավ: Ռուսական հայտնի մի հեռուստածրագիր ցուցադրեց մի դիսկոտեկ, ուր սիրահարները սիրո ու համբույրի պատրվակով անառակությամբ էին զբաղված մարդկանց ներկայությամբ: Հեռուստատեսային մեկնաբանը չէր բացառում, որ շատերն այդ օրը պարզապես առիթ գտան սեր խոստովանելու միմյանց, բայց, որ հատկապես Վալենտինի օրը ոմանց խրախուսում է ի ցույց աշխարհի դնել ժամանակակից մարդու անբարոյականության սահմանները, մտահոգիչ եւ վտանգավոր փաստ է:*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

## ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ՀՈՐԴՈՐԵԼ Է ԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԵՏ

Պապական ակադեմիայի 10-րդ տարելիցի առիթով Հովհաննես Պողոս Բ պապը հանուն կյանքի պահպանման կոչով դիմել է ներկաներին` նշելով, որ կենսաբժշկության մեջ արդի նվաճումների ոչ ճիշտ օգտագործումը կարող է բացասական հետեւանքների հանգեցնել: Ըստ Սրբազան Քահանայապետի` այսօր գենետիկայի եւ մոլեկուլյար կենսաբանության ասպարեզներում առկա նվաճումները նաեւ բազում խնդիրների առաջ են կանգնեցրել մարդկությանը: «Այդ գործոնները կարող են հանգեցնել անբարոյական պահվածքի եւ մարդու արժանապատվության նկատմամբ սխալ օրենքների ընդունմանը»,- նշել է նա: Ուստի վերոգրյալ բնագավառներում կատարվող հետազոտությունները պետք է հաշվի առնեն մարդաբանության եւ քրիստոնեական էթիկայի պահանջները:

## ՍՈԼՈՎԵՑԿԻ ՎԱՆՔԻ ՀԻՆ ԻԿՈՆՈՍՏԱՍԸ ԿՎԱՃԱՌՎԻ «ՍՈԹԲԻՍ» ԱՃՈՒՐԴՈՒՄ

Մայիսի 24-ին Լոնդոնի նշանավոր «Սոթբիս» աճուրդում կվաճառվի Սոլովեցկի Պայծառակերպության վանքի արժեքավոր իկոնոստասը: Վերջինս թվագրվում է ԺԶ դարով եւ այժմ գտնվում է Ամստերդամի պահոցներից մեկում: Նրա տերը բնակվում է Մերձբալթիկայում: Մասնագետներն այն գնահատում են 1,7 մլն. եվրո: 1676 թ. Ալեքսեյ Միխայլովիչ կայսեր հրամանով այդ վանական համալիրը քարուքանդ է արվել, իսկ վանականները` սպանվել: Բայց վանքի անկումից քիչ անց հնածեսներն իկոնոստասն իրենց հետ Ուրալ են տարել: 1960-ական թթ. սրբությունը հանգրվանել է Մերձբալթիկայում: Վերջինիս տերը, չհասկանալով սրբապատկերների արժեքը, դրանցից մի քանիսն օգտագործել է շինարարության մեջ: Մնացածները գնել է մի անհատ կոլեկցիոներ` այդպիսով փրկելով պատմական այդ իկոնոստասը: ՌԴ կուլտուրայի նախարար Միխայիլ Շվիդկոն հայտարարել է, որ իրենք հետաքրքրված են սրբությունը հայրենիք վերադարձնելու խնդրով եւ պատրաստ են բանակցելու:

## ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ ԱՆՀՆԱՐ Է

Սրբազան Քահանայապետի այցը Մոսկվա այսօր անհնար է: Այդ մասին հայտնել է քրիստոնեական միության աջակցության Պապական խորհրդի ղեկավար կարդինալ Վալտեր Կասպերը: «Մենք չենք կարող դա անել Ռուս Ուղղափառ եկեղեցու կամքին հակառակ: Այդ հարցը պետք է քննարկվի Մոսկվայի պատրիարքության հետ: Հուսով ենք, որ իրավիճակը կփոխվի, եւ այցն ամեն դեպքում կկայանա»,- նշել է կարդինալը` հավելելով, որ Հովհաննես Պողոս Բ-ն շատ է ցանկանում այցելել Մոսկվա: Վալտեր Կասպերը հանդիպել է Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի, Մոսկվայի պատրիարքության արտաքին եկեղեցական կապերի բաժնի նախագահ Կիրիլ միտրոպոլիտի հետ: Որոշվել է ստեղծել համատեղ հանձնաժողով, որը կքննի երկու եկեղեցիների միջեւ առկա խնդիրները եւ հանդես կգա առաջարկություններով:

## ԴԱՆԻԱՅՈՒՄ ԿԻՆ ՔԱՀԱՆԱՆ ԴԱՐՁԵԼ Է «ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ»

Դանիայի Լյութերական եկեղեցու կին քահանա Իեսե Դալը 25 տարի քահանայագործելուց հետո թողել է իր պաշտոնը` դառնալով առաջին «արհեստավարժ խոստովանահայրը»: «Մեր եկեղեցում չկա ավանդական խոստովանահայրություն, բայց այսօր մարդիկ ցանկանում են հաղորդակցվել Աստծո հետ եւ ոչ թե խոսել Նրա մասին»,- նշել է նա: Դանիական եկեղեցում խոստովանահայրերի ինստիտուտ չկա, սակայն տեղի քահանաները նշում են, որ իրենց հոտի անդամներն սկսել են ավելի հաճախ խորհուրդներ հարցնել հոգեւոր կյանքի մասին: «Հոգեւորականները բավարար ժամանակ չունեն մարդկանց հետ զրուցելու համար, ասում է Իեսե Դալը,- բայց խորհուրդ տալու պարագան շատ կարեւոր է: Եթե մենք չենք կարողանում մեր հավատացյալների հարցերին պատասխանել, ապա նրանք գնում են այլ կրոնական ուղղությունների ներկայացուցիչների կամ «Նոր դար» շարժման մոտ»: Դանիայի բնակչության 84%-ը Լյութերական եկեղեցու անդամ է, մինչդեռ 20 տարի առաջ Դանիական եկեղեցու անդամ էր իրեն համարում բնակչության 91%-ը: Դալին պաշտպան է կանգնել թեմի եպիսկոպոսը, սակայն թեմը չի կարողացել գումար գտնել նրան վճարելու համար: Ուստի Դալը որոշել է իր «հոգեւոր զավակներից» 600 դանիական կրոն (շուրջ 100 ԱՄՆ դոլար) վերցնել` կես ժամ զրույցի համար:

## ԱՄՆ-Ի ԱՆԳԼԻԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՄԻԱՍԵՌԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՆ ԿՈՐՑՆՈՒՄ

ԱՄՆ-ի Անգլիկան եկեղեցին միասեռականին եպիսկոպոս ձեռնադրելու համար կորցրել է 3 մլն. դոլար: ԱՄՆ-ի պահպանողական անգլիկան խորհրդի անդամ Բրյուս Մեյսոնի կարծիքով` եթե վերջինս չթողնի իր պաշտոնը, ապա եկեղեցին ֆինանսական լուրջ խնդիրների առաջ կկանգնի: Ուստի շատերը կարծում են, որ ԱՄՆ-ի Անգլիկան եկեղեցին ճիշտ ուղու վրա չէ:

## ԲՈՒՇԸ ԽՆԴՐԵԼ Է ԿՈՆԳՐԵՍԻՆ ԱՐԳԵԼԵԼ ՄԻԱՍԵՌԱԿԱՆ «ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու խնդրանքով դիմել է կոնգրեսին, որպեսզի արգելվեն «միասեռական ամուսնությունները»: Սպիտակ Տանը նա հայտարարել է, որ երբեք չպետք է մոռանալ սոցիալական հիմնական խնդիրների մասին` կոչ անելով բոլոր նահանգներին շուտափույթ քննարկել նոր փոփոխությունները եւ այդպիսով պահպանել ամուսնությունը` որպես տղամարդու եւ կնոջ սրբազան միություն:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԼ ԳԻԲՍՈՆԻ ՖԻԼՄԻ ՄԱՍԻՆ

Մոսկվայի պատրիարքության արտաքին եկեղեցական կապերի բաժնի աշխատակից Միխայիլ քահ. Դուդկոն, մեկնաբանելով աշխարհում մեծ աղմուկ հանած Մել Գիբսոնի «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմը, ասել է. «Ավետարանական պատմությունը շատ ավելի ճշգրիտ կարող է ներկայացվել սրբանկարչությամբ, քան ֆիլմերով»: Ըստ նրա` «սկզբունքորեն» ուղղափառ քրիստոնյաների համար ավետարանական դեպքերը ներկայացնելը «ավելի ստատիկ» բնույթ ունի, մինչդեռ կաթոլիկներին եւ բողոքականներին հատուկ է «Քրիստոսի եւ Աստվածամոր ավելի նատուրալիստական պատկերումը»: «Յուրաքանչյուրն ինքն է ընտրում իր ճանապարհը, սակայն նման թեմատիկայով ֆիլմեր ստեղծելիս շատ զգույշ պետք է լինել»:



## ՊԱՀՔԸ ՌԴ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Մեծ Պահքի հետ կապված փոփոխություններ են կատարվել Կրեմլի, կառավարության, Պետդումայի եւ այլ պետական կառույցների ճաշացուցակներում: Նրանց, ովքեր պահք են պահում, խոհարարները բազմաթիվ ուտեստներ են առաջարկում: Ըստ տեղեկությունների` պետական գործիչների կեսից ավելին նախընտրում են պահոց կերակուրներ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Հնությունների պահպանման ոչ պետական խորհրդի նախագահ Դավիթ Մայիսաշվիլին հայտնել է, որ վերջին 6 տարիների ընթացքում եկեղեցիներում շատացել են բարբարոսության դեպքերը: Նա նշել է, որ անցած տարի Սագարեջոյում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցում անհայտ անձինք հանել են Տիրամոր սրբապատկերի աչքերը, իսկ Ս. Գեւորգի եկեղեցում այրել սրբապատկերներ եւ կոտրել խաչեր: Ըստ Մայիսաշվիլու` դա Վրաստանում գործող սատանայական կազմակերպությունների անդամների ձեռքի գործն է: Վերջիններիս անդամակցելու առաջին նախապայմանը Տիրամորը հայհոյելն է:

*Լրաքաղը`*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր`**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ`**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր`**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական`** 624
**Խմբագրության հասցեն`**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ
**հեռախոս`**
(0+31) 56780, 54510
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 1. 3. 2004թ.

**Տպաքանակը` 2500**
**Գինը` 50 դրամ**